

**69/323. Ցեղասպանության հանցագործության գոհերի հիշատակի ու արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր**

*Գլխավոր ասամբլեան,*

*ղեկավարվելով* Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով<sup>1</sup>, «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայով<sup>2</sup> և այլ համապատասխան միջազգային փաստաթղթերով,

*վկայակոչելով* իր՝ 1946 թվականի դեկտեմբերի 11-ի 96 (I), 1948 թվականի դեկտեմբերի 9-ի 260 A (III) և 1998 թվականի դեկտեմբերի 2-ի 53/43 բանաձևերը և Միավորված ազգերի կազմակերպության համակարգի շրջանակներում ընդունված մյուս համապատասխան բանաձևերը, որոնք նպաստել են ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու գործընթացի հաստատմանն ու զարգացմանը,

*վկայակոչելով նաև* ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ՝ Մարդու իրավունքների խորհրդի 2008 թվականի մարտի 28-ի 7/25<sup>3</sup>, 2013 թվականի մարտի 22-ի 22/22<sup>4</sup> և 2015 թվականի մարտի 27-ի 28/34 բանաձևերը,

*վերահասարարելով* 1948 թվականի դեկտեմբերի 9-ին ընդունված Կոնվենցիայի կարևորությունը՝ որպես ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու համար միջազգային արդյունավետ փաստաթուղթ,

*ընդունելով*, որ Կոնվենցիայով սահմանված ցեղասպանության հանցագործության գոհերը և ցեղասպանության հանցագործությունից տուժած այլ անձինք այս մասին հիշատակելու կոչ են անում, ինչը կարևոր դեր է խաղում ցեղասպանության կանխարգելման գործում,

*վերահասարարելով* յուրաքանչյուր պետության՝ իր բնակչությանը ցեղասպանությունից պաշտպանելու պատասխանատվությունը, ինչը ենթադրում է այդպիսի հանցագործության, այդ թվում՝ դրա հրահրման դեպքի՝ համապատասխան և անհրաժեշտ միջոցներով կանխում և այն փաստը, որ ցեղասպանության հանցագործության անպատժելիության դեմ պայքարը կարևոր գործոն է այն կանխարգելելու համար,

*վերահասարարելով* իր՝ Միջազգային տարիներ հռչակելու վերաբերյալ 1998 թվականի դեկտեմբերի 15-ի 53/199 և 2006 թվականի դեկտեմբերի 20-ի 61/185 բանաձևերը, ինչպես նաև Տնտեսական և սոցիալական հարցերով խորհրդի՝ 1980 թվականի հուլիսի 25-ի Միջազգային տարիների և հիշատակի օրերի վերաբերյալ 1980/67 բանաձևը, մասնավորապես, դրանք հռչակելու համաձայնեցված չափորոշիչների վերաբերյալ հավելվածի 1-10-րդ պարբերությունները, ինչպես նաև 13-րդ և 14-րդ պարբերությունները, որտեղ նշվում է, որ

<sup>1</sup> Բանաձև 217 A (III):

<sup>2</sup> Բանաձև 260 A (III), հավելված:

<sup>3</sup> *Տե՛ս* Գլխավոր ասամբլեայի պաշտոնական արձանագրություններ, 63-րդ նստաշրջան, հավելված թիվ 53 (A/63/53), գլուխ II:

<sup>4</sup> Նույն տեղում, 68-րդ նստաշրջան, հավելված թիվ 53 (A/67/53), գլուխ IV, բաժին Ա:

միջազգային օր կամ տարի չպետք է հռչակվի, քանի դեռ դրա կազմակերպման և ֆինանսավորման հետ կապված հիմնական միջոցառումները չեն իրականացվել.

1. *Որոշում է* դեկտեմբերի 9-ը հռչակել Ցեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի ու արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր:

2. *Հորդորում է* Անդամ և դիտորդ հանդիսացող բոլոր պետություններին, Միավորված ազգերի կազմակերպության համակարգի բոլոր կազմակերպություններին և այլ միջազգային ու տարածաշրջանային կազմակերպություններին և քաղաքացիական հասարակությանը, այդ թվում՝ հասարակական կազմակերպություններին և անհատներին հետևել Միջազգային օրվան՝ «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի<sup>2</sup> և Կոնվենցիայով սահմանված ցեղասպանության հանցագործության դեմ պայքարի և կանխարգելման գործում դրա դերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով, և բարձր պահել զոհերի հիշատակն ու պատիվը.

3. *Շեշտում է* այն փաստը, որ սույն բանաձևի իրականացումից բխող բոլոր գործողությունների հետ կապված ծախսերը պետք է կատարվեն կամավոր վճարումների հաշվին.

4. *Խնդրում է* Գլխավոր քարտուղարին սույն բանաձևը ներկայացնել բոլոր Անդամ պետություններին, Միավորված ազգերի կազմակերպության կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ուշադրությանը՝ պատշաճ ձևով հետևելու համար:

*103-րդ լիազումար նիստ*

*2015 թվականի սեպտեմբերի 11*